

Խումբ N 10 Այլ(լուսային սարքեր, ծայն. ազդ., երկաթ. գծանց, ավտոմայրուղի, վթար. ազդ. և վթար. կանգառ, քնակելի գոտի)

Օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում՝ անկախ ճանապարհի լուսավորվածությունից, երթևեկող մեխանիկական տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն՝

1. Լապտերների հեռահար լույսը:
2. Լապտերների մոտակա լույսը:
3. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:

Ո՞ր դեպքում օրվա լուսավոր ժամանակ մոտոցիկլի վրա պետք է միացված լինի լապտերների մոտակա լույսը:

1. Անբավարար տեսանելիության պայմաններում երթևեկելիս:
2. Դեպի կայանման վայր շարժվող, անսարքություններ ունեցող մոտոցիկլով երթևեկելիս:
3. Ցանկացած դեպքում՝ երթևեկության մեջ գտնվելիս:
4. Հիվանդ ուղևոր փոխադրելիս:

Առաջնահերթ ի՞նչ պետք է ձեռնարկի վարորդը հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցի լապտերների լույսից շլանալու դեպքում:

1. Լապտերների հեռահար լույսը (միացված լինելու դեպքում) փոխարկի մոտակայի:
2. Միացնի վթարային լուսային ազդանշանը:
3. Տա ձայնային ազդանշան՝ մեկ երկար և երեք կարճ:
4. Տա ձայնային ազդանշան՝ մեկ կարճ և երեք երկար:

Ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն

1. Բնակավայրերում՝ վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար:
2. Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:
3. Երկու դեպքում էլ:

Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում երթևեկող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա պետք է միացված լինի՝

1. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:
2. Լապտերների միայն մոտակա լույսը:
3. Լապտերների միայն հեռահար լույսը:

Հետին հակամառախուղային լապտերիկները կարող են օգտագործվել՝

1. Օրվա մութ ժամանակ՝ տրանսպորտային շարասյան կազմում երթևեկելիս:
2. Թունելներում երթևեկելիս:
3. Միայն անբավարար տեսանելիության պայմաններում:
4. Օրվա մութ ժամանակ՝ տրանսպորտային միջոցը բեռնաթափելիս:
5. Թվարկած բոլոր դեպքերում:

Խումբ N 10 Այլ(լուսային սարքեր, ծայն. ազդ., երկաթ. գծանց, ավտոմայրուղի, վթար. ազդ. և վթար. կանգառ, բնակելի գոտի)

Հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա լապտերների հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի:

1. 100 մ-ից ոչ պակաս:
 2. 150 մ-ից ոչ պակաս:
 3. 300 մ-ից ոչ պակաս:

Լապտեր-լուսարձակ թույլատրվում է օգտագործել՝

1. Միայն բնակավայրերից դուրս՝ հանդիպակաց տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում:
 2. Միայն անբավարար տեսանելիության պայմաններում:
 3. Ցանկացած տեղում, եթե դրա անհրաժեշտությունը կա:
 4. Օրվա մութ ժամանակ՝ ճանապարհների բոլոր հատվածներում:

Այս նախազգուշացնող նշանը բնակավայրերում, մինչև վտանգավոր հատվածի սկիզբը ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում:



1. 25 - 50 մ:
 2. 50 - 100 մ:
 3. 100 - 150 մ:

Թույլատրվո՞ւմ է արդյոք երկաթուղային գծանցով փոխադրել գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ:

1. Թույլատրվում է, եթե գծանցը կահավորված չէ ուղեփակոցով:
 2. Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են ոչ տրանսպորտային վիճակում:
 3. Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են տրանսպորտային վիճակում:

Որտե՞ղ է թույլատրվում հատել երկաթուղային գծերը:

1. Այն տեղերում, որտեղ երկու կողմից տեսանելիությունը կազմում է առնվազն 1000 մ:
 2. Վարորդի հայեցողությամբ՝ դրա համար առավել հարմարավետ տեղերում:
 3. Դրա համար նախատեսված տեղերում:
 4. Երկաթուղային կայարաններից առնվազն 1000 մ հեռավորության վրա:

Թույլատրվո՞ւմ է արդյոք ծառայողական առաջադրանք կատարելիս ինքնակամ բացել կամ շրջանցել ուղեփակոցը:

1. Արգելվում է:
 2. Թույլատրվում է:
 3. Թույլատրվում է՝ վարորդի հայեցողությամբ, եթե մոտակայքում բացակայում է մոտեցող գնացքը:
 4. Թույլատրվում է՝ գծանցի հերթապահի բացակայության դեպքում:

Խումբ N 10 Այլ(լուսային սարքեր, ծայն. ազդ., երկաթ. գծանց, ավտոմայրուղի, վթար. ազդ. և վթար. կանգառ, քնակելի գոտի)

Թույլատրվում է արդյոք երկաթուղային գծանցով փոխադրել գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ:

1. Թույլատրվում է:
 2. Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են տրանսպորտային վիճակում:
 3. Արգելվում է:

Ինչո՞վ պետք է ղեկավարվի վարորդը երկաթուղային գծանցին մոտենալիս:

1. Ուղեփակոցի դիրքով և լուսացույցի ազդանշաններով:
 2. Ճանապարհային նշանների և գծանշումների պահանջներով:
 3. Գծանցի հերթապահի ցուցումներով:
 4. Բոլոր թվարկած պահանջներով:

Թույլատրվում է արդյոք հետիոտներին շարժվել «Ավտոմայրուղի» նշանով կահավորված ճանապարհով:

1. Արգելվում է:
 2. Թույլատրվում է՝ բնակավայրերից դուրս՝ տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ:
 3. Թույլատրվում է՝ բնակավայրերից դուրս՝ տրանսպորտային միջոցների հոսքին համընթաց:

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային ավտոբուսների երթևեկությունն ավտոմայրուղիներով:

1. 70 կմ/ժ:
 2. 80 կմ/ժ:
 3. 110 կմ/ժ:
 4. 100 կմ/ժ:
 5. 90 կմ/ժ:

Տրանսպորտային միջոցներով, որոնց արագությունը տեխնիկական բնութագրերից կամ վիճակից ելնելով չի գերազանցում 40 կմ/ժ, ավտոմայրուղիներով երթևեկել՝

1. Թույլատրվում է՝ միայն աջ եզրային գոտիով:
 2. Արգելվում է:
 3. Թույլատրվում է՝ «Նվազագույն արագության սահմանափակում» նշանի բացակայության դեպքում:

Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
 2. Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում:
 3. Երկու դեպքում էլ:

Խումբ N 10 Այլ(լուսային սարքեր, ծայն. ազդ., երկաթ. գծանց, ավտոմայրուղի, վթար. ազդ. և վթար. կանգառ, բնակելի գոտի)

Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
2. Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):
3. Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում:
4. Թվարկած բոլոր դեպքերում:

Տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում «Վթարային կանգառ» նշանը:

1. Բնակավայրերում՝ ոչ պակաս 15 մ վրա, բնակավայրերից դուրս՝ 30 մ:
2. Բնակավայրերում՝ ոչ պակաս 10 մ վրա, բնակավայրերից դուրս՝ 20 մ:
3. Բնակավայրերում՝ ոչ պակաս 5 մ վրա, բնակավայրերից դուրս՝ 10 մ:

Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝

1. Լապտերների լույսից վարորդի շլացման դեպքում:
2. Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
2. Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):
3. Երկու դեպքում էլ:

Կառուցապատված տարածքներում, որտեղ մուտք ու ելքը նշված են «Բնակելի գոտի» և «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշաններով, չի արգելվում՝

1. Զետիոտների երթևեկությունը ճանապարհի երթևեկելի մասով:
2. Տրանսպորտային միջոցների միջանցիկ երթևեկությունը:
3. Ուսումնական վարումը:

Խաչմերուկը համարվում է կարգավորվող, եթե երթևեկության հերթականությունը որոշվում է՝


1. Միայն լուսացույցի ազդանշաններով:
2. Միայն կարգավորողի ազդանշաններով:
3. Լուսացույցի և կարգավորողի ազդանշաններով:

Խումբ N 10 Այլ(լուսային սարքեր, ծայն. ազդ., երկաթ. գծանց, ավտոմայրուղի, վթար. ազդ. և վթար. կանգառ, բնակելի գոտի)

Ի՞նչ արագությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցների երթևեկությունը «Բնակելի գոտի» և «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշանների ազդեցության տարածքներում:

1. 5 կմ/ժ ոչ ավելի:
 2. 10 կմ/ժ ոչ ավելի:
 3. 20 կմ/ժ ոչ ավելի:

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում թեթև մարդատար ավտոմոբիլների երթևեկությունը այս ճանապարհային նշանի ազդեցության ճանապարհահատվածներում:




1. 70 կմ/ժ:
 2. 80 կմ/ժ:
 3. 90 կմ/ժ:
 4. 100 կմ/ժ:
 5. 110 կմ/ժ:

Առանց ծածկույթի հողային ճանապարհի վրա, անմիջապես խաչմերուկից առաջ, ծածկույթով հատվածի առկայությունն արդյոք այդ ճանապարհը դարձնու՞մ է հատվողին հավասարազոր:

1. Ոչ:
 2. Այո:

Ո՞ր նկարում են պատկերված երթևեկության թույլատրելի ուղղությունները:



1. Չախ նկարում:
 2. Մեջտեղի նկարում:
 3. Աջ նկարում:
 4. Մեջտեղի և աջ նկարներում:

Եթե լուսացույցի ազդանշանների նշանակությունները հակասում են առավելության նշանների պահանջներին, ապա վարորդները պետք է ղեկավարվեն՝

1. Նշանների պահանջներով:
 2. Լուսացույցի ազդանշաններով:

Թույլատրվու՞մ է արդյոք վարորդին շարունակել երթևեկությունը լուսացույցի դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորող ձեռքը բարձրացնելու դեպքում:


1. Արգելվում է:
 2. Թույլատրվում է, եթե վարորդը հնարավորություն չունի կանգնել՝ առանց կտրուկ արգելակման:

Խումբ N 10 Այլ(լուսային սարքեր, ծայն. ազդ., երկաթ. գծանց, ավտոմայրուղի, վթար. ազդ. և վթար. կանգառ, քնակելի գոտի)

Կարգավորողն ազդանշան տալիս է սուլիչով՝

1. Միայն այն դեպքում, երբ պահանջում է կանգնեցնել տրանսպորտային միջոցը:
2. Երթևեկության մասնակիցների ուշադրությունն իր վրա հրավիրելու համար:

Թույլատրվում է արդյոք տվյալ իրադրությունում ավտոգնացքի վարորդին անցնել կամուրջի վրայով:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պարտավոր է արդյոք վարել սովորողն ուսումնական վարման ժամանակ ամրակապվել անվտանգության գոտիներով:

1. Պարտավոր է:
2. Պարտավոր չէ:
3. Պարտավոր չէ, եթե դա դժվարացնում է ավտոմոբիլ ղեկավարելը:
4. Պարտավոր չէ, եթե թույլատրում է վարել սովորեցնողը: